

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

հեռախոսահամարը

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

հեռախոսահամարը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20__թվական

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

N	Հարց	Պատասխան
1.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
2.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող ստորաբաժանումները	
3.	Տնտեսավարող սուբյեկտի լիցենզիայի տեսակը	
4.	Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը	
5.	Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

«Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համաճարակաբանական հսկողության սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

Հ/Հ	Նորմատիվ իրավական ակտի պահանջը	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Զ/պ	Կշիռ	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում (այսուհետ՝ ԲԿ) վիրուսային հեպատիտ Բ-ի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով հետազոտվում են՝	«Առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 4						
1.1	արյան դոնորները,					3.0	Փաստաթղթային	
1.2	սերմնահեղուկի դոնորները,					3.0	Փաստաթղթային	
1.3	ոսկրածուծի, հյուսվածքների, օրգանների դոնորները,					3.0	Փաստաթղթային	
1.4	նպատակային քանակակազմը՝ արագ թեստի միջոցով, որի դրական արդյունքի դեպքում նաև կատարվում է հետազոտություն իմունաֆերմենտային անալիզի մեթոդով: Նշում 1					3.0	Փաստաթղթային	
2.	Արագ թեստերը կիրառվում են՝	«Առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 5, 11					Փաստաթղթային	
2.1	փոխպատվաստման ոլորտում՝ դոնորական նյութը՝ վերցնելուց առաջ,					3.0	Փաստաթղթային	
2.2	դոնորական ծառայությունում՝ արյան պատրաստուկների արագ փոխներարկման անհրաժեշտության դեպքում,					3.0	Փաստաթղթային	

2.3	ԲԿ-ների ընդունարաններում՝ անհետաձգելի բժշկական միջամտությունների համար դիմած հիվանդների համար:					3.0	Փաստաթղթային	
3.	Բժշկական փաստաթղթերում կատարվում են գրառումներ ախտորոշման համաճարակաբանական ցուցանիշների վերաբերյալ, որոնք ներառում են՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 8, 9						
3.1	համաճարակաբանական վերհուշը,					1.0	Փաստաթղթային	
3.2	վիրուսային հեպատիտ Բ-ով, Ց-ով հիվանդի հետ շփումը,					1.0	Փաստաթղթային	
3.3	արյան փոխներարկումը,					1.0	Փաստաթղթային	
3.4	ինվազիվ միջամտությունների ենթարկվելը:					1.0	Փաստաթղթային	
4.	ԲԿ դիմած վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի կասկածով անձն ուղեգրվում է արյան լաբորատոր հետազոտությունների՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 10					Փաստաթղթային	
4.1	հեպատիտների մարկերների հայտնաբերման հետազոտություններ (յուրաքանչյուր հեպատիտի համար սպեցիֆիկ հակածիններ և հակամարմիններ),					3.0	Փաստաթղթային	
4.2	պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով վիրուսների հայտնաբերում արյան մեջ:					3.0	Փաստաթղթային	
5.	Արագ թեստի դրական արդյունքի դեպքում իրականացվել է հետազոտություն իմունաֆերմենտային մեթոդով:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 12				3.0	Փաստաթղթային	
6.	Լաբորատորիայի կողմից տրվող փաստաթղթում նշված է կիրառված թեստի անվանումը:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 13				1.0	Փաստաթղթային	

7.	Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի դեպքերը գրանցվում են «Վարակիչ հիվանդությունների հաշվառման մատյանում»: Նշում 2	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 16				2.0	Փաստաթղթային	
8.	Ծննդատները վիրուսային հեպատիտ Ց-ով մայրերից ծնված երեխաների տվյալները հաղորդում են բնակության վայրի մանկական ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություն՝ հետագա հետազոտությունները կազմակերպելու նպատակով:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 19				2.0	Փաստաթղթային Հարցում	
9.	Սուր կամ քրոնիկ հեպատիտ Բ-ով և ՀԲՄ-հակաձնակիր կանանցից ծնված երեխաները ենթարկվել են շարունակական հսկողության մեկ տարվա ընթացքում՝ ԱԼԱՏ ֆերմենտի ակտիվության որոշմամբ և ՀԲՄ հակաձնի վերաբերյալ հետազոտությամբ 3, 6 և 12 ամսականում:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 20				3.0	Փաստաթղթային	
10.	ԲԿ-ում ապահովվում է վտանգավոր բժշկական թափոնների անվտանգ գործածությունը և աշխատանքի ընթացքում պատահական ծակոցների դեպքում ընթացակարգը (արագ պաշտպանություն ապահովելու անհրաժեշտության դեպքում կատարվում է վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ պատվաստում արագացված ժամանակացույցով): Նշում 3	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 22 ՀՀ առողջապահության նախարարի 17.08.2020 թվականի N 21-Ն հրամանի հավելվածի ձև 15				3.0	Փաստաթղթային դիտողական	
11.	Հաստատված սուր վիրուսային հեպատիտ Բ և Ց ախտորոշմամբ հիվանդները, ինչպես նաև՝ քրոնիկ վիրուսային հեպատիտ Բ և Ց ախտորոշմամբ հիվանդները սրացման շրջանում հոսպիտալացվել են վարակիչ հիվանդությունների հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 23, 24				2.0	Փաստաթղթային	

12.	Ստացիոնար բուժման ընթացքում հայտնաբերված վիրուսային հեպատիտ Բ-ի կամ Ց-ի ստանդարտ բնորոշումներին համապատասխան ախտանշաններով հիվանդներին տրամադրվում է վարակաբանի խորհրդատվություն:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 25				2.0	Փաստաթղթային	
13.	Վիրուսային հեպատիտ Բ-ով հիվանդի կոնտակտավորների նկատմամբ իրականացվել է 6 ամսյա շարունակական հսկողություն լաբորատոր հետազոտություններով՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 26						
13.1	ԱսԱՏ,					3.0	Փաստաթղթային	
13.2	ՀԲՄ-հակածին,					3.0	Փաստաթղթային	
13.3	հակա-ՀԲՄ հակամարմիններ. այն անձինք, որոնց մոտ հակա-ՀԲՄ հակամարմինների խտությունը կազմում է 10 ՄՄ/մլ և ավելի, հետագա հետազոտությունների չեն ենթարկվում:					3.0	Փաստաթղթային	
14.	Վիրուսային հեպատիտ Բ-ի ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով բուժաշխատողներն անցնում են արյան լաբորատոր հետազոտություններ վիրուսային հեպատիտ Բ-ի վերաբերյալ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 2 անգամ, լրացուցիչ՝ համաճարակաբանական ցուցումով.	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
14.1	արյան ծառայության անձնակազմ,					2.0	Փաստաթղթային	
14.2	հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության, հեմատոլոգիայի բաժանմունքների անձնակազմ,					2.0	Փաստաթղթային	
14.3	կլինիկաախտորոշիչ և կենսաքիմիական լաբորատորիաների անձնակազմ:					2.0	Փաստաթղթային	

15.	Վիրուսային հեպատիտ Բ-ի ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով բժշկական օգնության և սպասարկման համար դիմող անձինք անցնում են արյան լաբորատոր հետազոտություններ վիրուսային հեպատիտ Բ-ի վերաբերյալ՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
15.1	դոնորներ՝ ամեն անգամ արյուն հանձնելիս,					2.0	Փաստաթղթային	
15.2	հղիներ՝ հղիության առաջին եռամսյակում,					2.0	Փաստաթղթային	
15.3	արյան և դրա բաղադրիչների ռեցիպիենտներ վիրուսային հեպատիտ Բ-ի կասկածի ժամանակ՝ վերջին փոխներարկումից 6 ամիս, այնուհետև 12 ամիս հետո,					2.0	Փաստաթղթային	
15.4	ՀԲմ դրական մայրերից ծնված երեխաներ՝ երեխայի հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումների ավարտից առնվազն 1-2 ամիս հետո (հետազոտությունը չպետք է կատարվի 9 ամսականից շուտ կամ վերջին դեղաչափից հաշված 1 ամսվա ընթացքում),					2.0	Փաստաթղթային	
15.5	հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության և հեմատոլոգիայի բաժանմունքների հիվանդներ՝ բուժման ընդունվելիս և հետագայում համաճարակաբանական ցուցումով,					2.0	Փաստաթղթային	
15.6	ցանկացած քրոնիկ ախտաբանությամբ հիվանդ (տուբերկուլոզ, օնկոլոգիա, հոգեներոլոգիա և այլն)՝ առաջնային կլինիկալաբորատոր հետազոտության ժամանակ և հետագայում՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
15.7	յարդի քրոնիկ ախտահարմամբ կամ դրա կասկածով հիվանդներ (քրոնիկ հեպատիտ, յարդի ցիրոզ, հեպատոկարցինոմա և հեպատոբիլիար համակարգի այլ քրոնիկ հիվանդություններ)՝ առաջնային					2.0	Փաստաթղթային	

	կլինիկալաբորատոր հետազոտության ժամանակ և հետագայում՝ ըստ ցուցումների,							
15.8	նարկոլոգիական, մաշկավեներական դիսպանսերների, կաթինետների և ստացիոնարների հիվանդներ/այցելուներ՝ հաշվառման վերցնելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
15.9	պլանային վիրաբուժական միջամտությունների համար ստացիոնար ընդունված հիվանդներ (բացառությամբ 0-18 տարեկան ազգաբնակչությունը)՝ ստացիոնար ընդունվելուց առաջ,					2.0	Փաստաթղթային	
15.10	մանկատան, հատուկ մանկական հաստատությունների երեխաներ՝ ընդունվելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
15.11	վիրուսային հեպատիտ Բ-ի օջախների կոնտակտավորներ (սուր և քրոնիկ ձևերով, և ՀԲՄ-հակաձնակիրներ (HBs հակաձնակիր)՝ օջախը հայտնաբերելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ քրոնիկ օջախներում,					2.0	Փաստաթղթային	
15.12	քիմիաթերապիա ստացող հիվանդներ՝ քիմիաթերապիա ստանալուց առաջ:					2.0	Փաստաթղթային	
16.	Վիրուսային հեպատիտ Ց-ի ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով վիրուսային հեպատիտ Ց-ի վերաբերյալ արյան լաբորատոր հետազոտություններ (հակա-ՀՅՎ) են անցնում բուժաշխատողները՝ աշխատանքի ընդունվելիս և հաջորդիվ՝ տարին մեկ անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների.	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
16.1	արյան կետերի,					2.0	Փաստաթղթային	

16.2	հեմոդիալիզի, օրգանների փոխպատվաստման, հեմոտոլոգիական բաժանմունքների,					2.0	Փաստաթղթային	
16.3	կլինիկաախտորոշիչ լաբորատորիաների,					2.0	Փաստաթղթային	
16.4	վիրաբուժական, ուրոլոգիական, մանկաբարձագինեկոլոգիական, ակնաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական, անեսթեզիոլոգիական, վերակենդանացման, ստոմատոլոգիական, ինֆեկցիոն, ստամոքս-աղիքային ստացիոնարների, բաժանմունքների, կաբինետների (այդ թվում՝ վիրակապարանների, միջամտությունների, պատվաստումների),					2.0	Փաստաթղթային	
16.5	պերինատալ կենտրոնների,					2.0	Փաստաթղթային	
16.6	շտապ բուժօգնության կայանների և բաժանմունքների,					2.0	Փաստաթղթային	
16.7	աղետների բժշկության կենտրոնների,					2.0	Փաստաթղթային	
16.8	բուժակ-մանկաբարձական կետերի:					2.0	Փաստաթղթային	
17.	Վիրուսային հեպատիտ Ց-ի ներհիվանդանոցային վարակի կանխարգելման նպատակով բժշկական օգնության և սպասարկման համար դիմած անձինք անցնում են արյան լաբորատոր հետազոտություններ վիրուսային հեպատիտ Ց-ի վերաբերյալ (հակա-ՀՅՎ).	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
17.1	հղիներ՝ հղիության I և III եռամսյակում					2.0	Փաստաթղթային	
17.2	արյան, դրա բաղադրամասերի, օրգանների և հյուսվածքների ռեցիպիենտներ՝ վիրուսային հեպատիտի կասկածի ժամանակ՝ արյան և դրա բաղադրամասերի փոխներարկումից հետո 6 ամսվա ընթացքում,					2.0	Փաստաթղթային	

17.3	հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության, արյունաբանական բաժանմունքների հիվանդներ՝ ընդունվելիս և անհրաժեշտության դեպքում՝ կլինիկական և համաճարակաբանական ցուցումներով,					2.0	Փաստաթղթային	
17.4	պլանային վիրաբուժական միջամտության ընդունվող և քիմիաթերապիա ստացող հիվանդներ՝ ընդունվելիս կամ բուժման կուրսը սկսելուց ոչ պակաս, քան 30-րդ օրը,					2.0	Փաստաթղթային	
17.5	քրոնիկ հիվանդություններով, այդ թվում՝ լյարդի ախտահարումով հիվանդներ՝ առաջնային կլինիկաախտորոշիչ հետազոտության ընթացքում, լրացուցիչ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
17.6	նարկոլոգիական և մաշկավեներական դիսպանսերների, կաթինետների, ստացիոնարների հիվանդներ՝ բացառությամբ մաշկային, սնկային և քոսով հիվանդների՝ հաշվառման վերցնելիս և հաջորդիվ՝ տարեկան 1 անգամից ոչ հազվադեպ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
17.7	մանուկների և մեծահասակների շուրջօրյա կեցության վայրերում (մանկատուն, հատուկ դպրոց, դպրոց-ինտերնատ և այլն) գտնվողներ և անձնակազմ՝ ոչ հազվադեպ, քան տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
17.8	քրոնիկ հեպատիտ Յ-ի օջախներում կոնտակտավորներ՝ այդ թվում սեռական զուգընկերներ՝ տարին 1 անգամից ոչ հազվադեպ,					2.0	Փաստաթղթային	
17.9	անձինք, որոնք հեպատիտ Յ-ով վարակման ռիսկի քանակակազմում են՝ ռիսկի գործոններ հայտնաբերելիս,					2.0	Փաստաթղթային	

17.10	քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ՝ բժշկական կազմակերպություն ընդունվելիս, հաջորդիվ՝ ըստ ցուցումների,					2.0	Փաստաթղթային	
17.11	արյան, դրա բաղադրամասերի, օրգանների և հյուսվածքների, սերմի դոնորներ՝ յուրաքանչյուր անգամ դոնորական նյութ վերցնելիս (հակա-ՀՅՎ և հեպատիտ Ց-ի վիրուսի ՌՆԹ-ի (այսուհետ՝ ՀՅՎ ՌՆԹ) վերաբերյալ հետազոտություններ),					2.0	Փաստաթղթային	
17.12	հեպատիտ Ց-ով վարակված մայրերից ծնված մինչև 12 ամսական երեխաներ՝ 2, 6 և 12 ամսականում (2 ամսականում՝ ՀՅՎ ՌՆԹ-ի բացակայության պայմաններում), (հակա-ՀՅՎ+ՀՅՎ ՌՆԹ),					2.0	Փաստաթղթային	
17.13	յարդի անհայտ ծագման հիվանդություն ունեցող անձինք՝ առաջնային կլինիկալաբորատոր հետազոտության ընթացքում (հակա-ՀՅՎ+ՀՅՎ ՌՆԹ),					2.0	Փաստաթղթային	
17.14	հեմոդիալիզի, հեմատոլոգիայի և փոխպատվաստումների բաժանմունքների հիվանդներ, որոնք բժշկական կազմակերպությունում անց են կացնում 1 ամսից ավելի՝ ընդունվելուց 30 օր անց և հաջորդիվ՝ ամսական (հակա-ՀՅՎ+ՀՅՎ ՌՆԹ),					2.0	Փաստաթղթային	
17.15	սուր հեպատիտ Ց-ի օջախում կոնտակտավորներ՝ այդ թվում սեռական զուգընկերներ՝ օջախ արձանագրելիս և հաջորդիվ՝ միանվագ, 30 օրից (հակա-ՀՅՎ+ՀՅՎ ՌՆԹ),					2.0	Փաստաթղթային	
17.16	քրոնիկ հեպատիտ Ց-ի օջախում կոնտակտավորներ՝ սեռական զուգընկերներ՝ օջախ արձանագրելիս (հակա-ՀՅՎ+ՀՅՎ ՌՆԹ):					2.0	Փաստաթղթային	

18.	Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի յուրաքանչյուր դեպք հայտնաբերելիս՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
18.1	կատարվում է համաճարակաբանական հետազոտություն,					2.0	Փաստաթղթային Հարցում	
18.2	կազմակերպվում և իրականացվում են կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ:					2.0	Փաստաթղթային Հարցում	
19.	Ստացիոնարում 1 ամսից ավելի բուժվող հիվանդներն անցնում են արյան լաբորատոր հետազոտություններ՝ հակա-ՀՅՎ և ՀՅՎ ՌՆԹ:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27				2.0	Փաստաթղթային	
20.	Բուժանձնակազմի շրջանում մասնագիտական վարակման կանխարգելման նպատակով՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 27						
20.1	իրականացվում է կենսաբանական գործոններից բուժանձնակազմի պաշտպանություն (անհատական պաշտպանության ապահովում, բուժանձնակազմի շրջանում սպեցիֆիկ կանխարգելում, բժշկական վտանգավոր թափոնների անվտանգ գարծածության միջոցառումներ, վարակի հսկողության միջոցառումներ),					3.0	Փաստաթղթային Դիտողական Հարցում	
20.2	ապահովվում է բուժաշխատողների առողջական վիճակի նախնական և պարբերական բժշկական զննությունների գործընթացը,					3.0	Փաստաթղթային	

20.3	աշխատանքի ընթացքում բուժաշխատողի լորձաթաղանթի և մաշկի հետ հիվանդի կենսաբանական հեղուկների և արյան շփման ժամանակ իրականացվում է վիրուսային հեպատիտ Բ-ի արտակարգ կանխարգելում, իսկ հետագայում նաև սպեցիֆիկ կանխարգելում (պատվաստում արագ սխեմայով),					3.0	Փաստաթղթային	
20.4	իրականացվում է ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական հսկողություն,					3.0	Փաստաթղթային	
20.5	ներդրված է վարակի հսկողության ծրագիր:					3.0	Փաստաթղթային	
21.	Հիվանդներին տրամադրվում է խորհրդատվություն վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի փոխանցման ուղիների, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների, անվտանգ վարքագծի վերաբերյալ՝ ինչի մասին կատարվում են գրառումներ հիվանդության պատմագրի մեջ/ամբուլատոր հիվանդի բժշկական քարտում:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 30				1.0	Փաստաթղթային Հարցում	
22.	Սուր և քրոնիկ հեպատիտ Բ-ով բոլոր հիվանդացածների նկատմամբ շարունակական հսկողության շրջանակում առաջին զննությունն իրականացվում է ստացիոնարից դուրս գրվելուց հետո ոչ ուշ, քան մեկ ամիս անց:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 39, 40				3.0	Փաստաթղթային	
23.	Սուր հեպատիտ Բ-ով հիվանդացածների նկատմամբ իրականացվում է շարունակական հսկողություն 6 ամիս:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 42				3.0	Փաստաթղթային	
24.	Կլինիկական զննումը, կենսաքիմիական, իմունաբանական և վիրուսաբանական թեստերն իրականացվում են ստացիոնարից դուրս գրվելուց հետո՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն						

		հրամանի հավելվածի կետ 42						
24.1	1-ին ամսում,					1.0	Փաստաթղթային	
24.2	3-րդ ամսում,					1.0	Փաստաթղթային	
24.3	6-րդ ամսում:					1.0	Փաստաթղթային	
25.	ՀԲմ-հակաձնակիրները գտնվում են շարունակական հսկողության ներքո մինչև ՀԲմ հակաձնի վերաբերյալ հետազոտության բացասական արդյունքը և հակա-ՀԲմ հայտնաբերումը: Հետազոտությունների ծավալը կախված է դրոշմների հայտնաբերումից, հետազոտությունները կատարվում են ոչ ուշ, քան 6 ամիսը մեկ:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 43				3.0	Փաստաթղթային	
26.	Սուր կամ քրոնիկ հեպատիտ Ց-ով հիվանդները և այն անձինք, որոնց մոտ հայտնաբերվել են հակա-ՀՅՎ (անկախ ՀՅՎ ՌՆԹ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքից) գտնվում են շարունակական հսկողության ներքո առնվազն 2 տարի՝ 6 ամիսը մեկ անցնելով համալիր կլինիկալաբորատոր հետազոտություններ՝ ՀՅՎ ՌՆԹ-ի վերաբերյալ պարտադիր հետազոտությամբ:	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 44, 45, 46, 47				3.0	Փաստաթղթային	
27.	Վիրուսային հեպատիտ Ց-ով հիվանդ մայրերից ծնված երեխաները շարունակական հսկողության շրջանակում անցնում են հետազոտություն հակա-ՀՅՎ-ի և ՀՅՎ ՌՆԹ-ի վերաբերյալ՝	ՀՀ առողջապահության նախարարի 23.12.2015 թվականի N 59-Ն հրամանի հավելվածի կետ 48, 49, 50						
27.1	2 ամսականում,					1.0	Փաստաթղթային	
27.2	6 ամսականում,					1.0	Փաստաթղթային	
27.3	12 ամսականում:					1.0	Փաստաթղթային	

Ծանոթություններ*

Նշում 1

ՔԱՆԱԿԱԿԱԶՄ

ԱՐՅԱՆ ՄԵՋ ԻՄՈՒՆԱՖԵՐՄԵՆՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ ՀԵՊԱՏԻՏ Բ ՎԻՐՈՒՍԻ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՀԱԿԱԾՆԻ (HBsAg) ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ

Հ/Հ	Քանակակազմ	Հետազոտության ժամանակաշրջան
1.	Դոնորներ	Ամեն անգամ արյուն հանձնելիս
2.	Հղիներ	Հղիության առաջին եռամսյակում
3.	Արյան և դրա բաղադրիչների ռեցիպիենտներ՝ կյանքի 1-ին տարում գտնվող երեխաներ և այլ	Վիրուսային հեպատիտ Բ-ի կասկածի ժամանակ՝ վերջին փոխներարկումից 6 ամիս, այնուհետև 12 ամիս հետո
4.	ՀԲՄ դրական մայրերից ծնված երեխաներ	Երեխայի հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումների ավարտից առնվազն 1-2 ամիս հետո: Հետազոտությունը չպետք է կատարվի 9 ամսականից շուտ կամ վերջին դեղաչափից հաշված 1 ամսվա ընթացքում
5.	Արյան ծառայության անձնակազմ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 2 անգամ, լրացուցիչ՝ համաճարակաբանական ցուցումով
6.	Հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության, հեմատոլոգիայի բաժանմունքների անձնակազմ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 2 անգամ, լրացուցիչ՝ համաճարակաբանական ցուցումով
7.	Կլինիկախտորոշիչ և կենսաքիմիական լաբորատորիաների անձնակազմ	Աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 2 անգամ, լրացուցիչ՝ համաճարակաբանական ցուցումով
8.	Հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության և հեմատոլոգիայի բաժանմունքների հիվանդներ	Բաժանմունք բուժման ընդունվելիս և հետագայում համաճարակաբանական ցուցումով
9.	Ցանկացած քրոնիկ ախտաբանությամբ հիվանդ (տուբերկուլոզ, օնկոլոգիա, հոգեենկրոլոգիա և այլն)	Առաջնային կլինիկալաբորատոր հետազոտության ժամանակ և հետագայում՝ ըստ ցուցումների

10.	Լյարդի քրոնիկ ախտահարմամբ կամ դրա կասկածով հիվանդներ (քրոնիկ հեպատիտ, լյարդի ցիրոզ, հեպատոկարցինոմա և հեպատոբիլիար համակարգի այլ քրոնիկ հիվանդություններ)	Առաջնային կլինիկալաբորատոր հետազոտության ժամանակ և հետագայում՝ ըստ ցուցումների
11.	Նարկոլոգիական, մաշկավեներական դիսպանսերների, կաբինետների և ստացիոնարների հիվանդներ/այցելուներ	Հաշվառման վերցնելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
12.	Պլանային վիրաբուժական միջամտությունների համար ստացիոնար ընդունված հիվանդներ (բացառությամբ 0-18 տարեկան ազգաբնակչությունը)	Ստացիոնար ընդունվելուց առաջ
13.	Մանկատան, հատուկ մանկական հաստատությունների երեխաներ	Ընդունվելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
14.	Վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի օջախների կոնտակտավորներ (սուր և քրոնիկ ձևերով, և ՀԲ մակերեսային հակաձնակիրներ (HBs հակաձնակիր)	Օջախը հայտնաբերելիս և հաջորդիվ՝ ոչ պակաս տարին 1 անգամ քրոնիկ օջախների համար
15.	Քիմիաթերապիա ստացող հիվանդներ	Քիմիաթերապիա ստանալուց առաջ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպության անվանում
Բժշկական փաստաթուղթ

ՄԱՏՅԱՆ

Վարակիչ հիվանդությունների հաշվառման

Սկիզբ «__» 20 թվական

Վերջ «__» 20 թվական

Վարակիչ հիվանդության անվանում _____

N	Հեռախոսով հաղորդման (ընդունման) ամսաթիվ և ժամ և առաջնային շտապ հաղորդման ուղարկման (ստացման) ամսաթիվ. (ով է ուղարկել), (ով է ընդունել)	Հաղորդում ուղարկող բուժկանխարգելիչ կազմակերպության անվանում	Անուն, ազգանուն, հայրանուն	Տարիք (մինչև 3տ երեխաների համար նշել ծնվելու ամսաթիվը և տարին)	Հասցե քաղաք, գյուղ, փողոց, տուն, բն.	Աշխատանքի վայրի, նախադպրոցական, դպրոցական կազմակերպության անվանում (խումբ, դասարան), վերջին հաճախման ամսաթիվ	Առաջին անգամ դիմելու ամսաթիվ	Հիվանդանալու ամսաթիվ	Ախտորոշման և դրա հաստատման ամսաթիվ	Հոսպիտալացման տեղ և ամսաթիվ	Փոփոխված (ճշտված) ախտորոշում և դրա հաստատման ամսաթիվ	Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվ, հետազոտողի ազգանուն	Հիվանդության մասին հաղորդում (հիվանդի մշտական բնակության նախադպրոցական, դպրոցական, աշխատանքի վայրի ՊՀՀ տեսչության տարածքային կենտրոններ)	Լաբորատոր հետազոտություններ, արդյունք	Ծանոթություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

Նշում 3

Բացառիկ դեպքերում (ճանապարհորդություն կամ երբ անհրաժեշտ է ապահովել արագ պաշտպանություն) կատարվում է վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ պատվաստում արագացված ժամանակացույցով՝ 0, 7-րդ և 21-րդ օրերին, իսկ 4-րդ դեղաչափը՝ 1-ին դեղաչափից 12 ամիս հետո: Նախկինում պատվաստված անձանց մոտ արյան մեջ հակա-ՀԲմ հակամարմինների <10 ՄՄ/մլ խտության դեպքում առաջարկվում է կրկնապատվաստում 3 լրացուցիչ դեղաչափով, այնուհետև հակամարմինների տիտրի որոշում 3-րդ դեղաչափի ներարկումից 1-2 ամիս հետո:

Նշում 4

ՔԱՆԱԿԱԿԱԶՄ

ԱՐՅԱՆ ՇԻՃՈՒԿՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի ՎԻՐՈՒՍԻ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՀԱԿԱ-ՀՅՎ) ԵՎ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի ՎԻՐՈՒՍԻ ՌԻՔՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՎԻ (ՌՆԹ) ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ

Հ/Հ	Քանակակազմ	Հետազոտության ժամանակաշրջան
1.	Արյան, դրա բաղադրամասերի, օրգանների և հյուսվածքների, սերմի դոնորներ	Ամեն դոնորության ժամանակ կամ յուրաքանչյուր անգամ դոնորական նյութ վերցնելիս
2.	Հեպատիտ Ց-ով վարակված մայրերից ծնված մինչև 12 ամսական երեխաներ	2, 6 և 12 ամսականում (2 ամսականում՝ ՀՅՎ ՌՆԹ-ի բացակայության պայմաններում)
3.	Իմունաանբավարարությամբ անձինք (ուռուցքաբանական հիվանդներ, հեմոդիալիզ ստացողներ, իմունաճնշիչ դեղորայք ստացողներ և այլն)	Համապատասխան քանակակազմերին պատկանելիս՝ համաձայն հավելվածի
4.	Լյարդի անհայտ ծագման հիվանդություն ունեցող անձինք	Առաջնային կլինիկալաբորատոր հետազոտության ընթացքում
5.	Հեմոդիալիզի, հեմատոլոգիայի և փոխպատվաստումների բաժանմունքների հիվանդներ, որոնք բժշկական կազմակերպությունում անց են կացնում 1 ամսից ավելի	Ընդունվելուց 30 օր անց և հաջորդիվ՝ ամսական
6.	Սուր հեպատիտ Ց-ի օջախում կոնտակտավորներ՝ այդ թվում սեռական զուգընկերներ	Օջախ արձանագրելիս և հաջորդիվ՝ միանվագ, 30 օրից
7.	Քրոնիկ հեպատիտ Ց-ի օջախում կոնտակտավորներ՝ սեռական զուգընկերներ	Օջախ արձանագրելիս

Ձև 3.

ՔԱՆԱԿԱԿԱԶՄ

ԱՐՅԱՆ ՇԻՃՈՒԿՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի ՎԻՐՈՒՄԻ ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՀԱԿԱ-ՀՅՎ-Ի) ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ

Հ/Հ	Քանակակազմ	Հետազոտության ժամանակաշրջան
1.	Հղիներ	Հղիության I և III եռամսյակում
2.	Արյան, դրա բաղադրամասերի, օրգանների և հյուսվածքների ռեցիպիենտներ	Վիրուսային հեպատիտի կասկածով անձինք արյան և դրա բաղադրամասերի փոխներարկումից հետո 6 ամսվա ընթացքում
3.	<p>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների անձնակազմը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) արյան կետերի, 2) հեմոդիալիզի, օրգանների փոխպատվաստման, հեմոտոլոգիական բաժանմունքների, 3) կլինիկաախտորոշիչ լաբորատորիաների, 4) վիրաբուժական, ուրոլոգիական, մանկաբարձագինեկոլոգիական, ակնաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական, անեսթեզիոլոգիական, վերակենդանացման, ստոմատոլոգիական, ինֆեկցիոն, ստամոքս-աղիքային ստացիոնարների, բաժանմունքների, կաբինետների (այդ թվում՝ վիրակապարանների, միջամտությունների, պատվաստումների), 5) պերինատալ կենտրոնների, 6) շտապ բուժօգնության կայանների և բաժանմունքների, 7) աղետների բժշկության կենտրոնների, 8) բուժակ-մանկաբարձական կետերի 	Աշխատանքի ընդունվելիս և հաջորդիվ՝ տարին մեկ անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
4.	Հեմոդիալիզի, երիկամների փոխպատվաստման, սիրտ-անոթային և թոքային վիրաբուժության, արյունաբանական բաժանմունքների հիվանդներ	Ընդունվելիս և անհրաժեշտության դեպքում՝ կլինիկական և համաճարակաբանական ցուցումներով
5.	Հիվանդները՝ պլանային վիրաբուժական միջամտության ընդունվելիս և քիմիաթերապիա ստանալուց առաջ	Ընդունվելուց կամ բուժման կուրսը սկսելուց ոչ պակաս, քան 30-րդ օրը

6.	Քրոնիկ հիվանդություններով հիվանդներ, այդ թվում՝ լյարդի ախտահարումով	Առաջնային կլինիկաախտորոշիչ հետազոտության ընթացքում, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
7.	Նարկոլոգիական և մաշկավեներական դիսպանսերների, կաբինետների, ստացիոնարների հիվանդները՝ բացառությամբ մաշկային, սնկային և քոսով հիվանդների	Հաշվառման վերցնելիս և հաջորդիվ՝ տարեկան 1 անգամից ոչ հազվադեպ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
8.	Մանուկների և մեծահասակների շուրջօրյա կեցության վայրերում (մանկատուն, հատուկ դպրոց, դպրոց-ինտերնատ և այլն) գտնվողներ և անձնակազմ	Ոչ հազվադեպ, քան տարին 1 անգամ, լրացուցիչ՝ ըստ ցուցումների
9.	Քրոնիկ հեպատիտ Ց-ի օջախներում կոնտակտավորներ՝ այդ թվում սեռական զուգընկերներ	Տարին 1 անգամից ոչ հազվադեպ, քրոնիկ հեպատիտ Ց-ով հիվանդից բաժանվելուց կամ նրա առողջանալուց (մահվանից) 6 ամիս անց
10.	Անձինք, որոնք հեպատիտ Ց-ով վարակման ռիսկի քանակակազմում են՝ 1) ներերակային թմրանյութեր օգտագործողներ և նրանց սեռական զուգընկերներ, 2) սեռական ծառայություններ մատուցող անձինք և նրանց սեռական զուգընկերներ, 3) համասեռամուլ տղամարդիկ, 4) բազմակի սեռական զուգընկերներ ունեցող անձինք	Ռիսկի գործոններ հայտնաբերելիս
11.	Քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ	Բժշկական կազմակերպություն ընդունվելիս, հաջորդիվ՝ ըստ ցուցումների

1.	«Այո»	առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները	V		
2.	«Ոչ»	բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ		V	
3.	«Չ/պ»	չի պահանջվում, չի վերաբերում			V

Ստուգաթերթը կազմվել է ներքոնշյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 59-Ն հրաման:
2. ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի N 21-Ն հրաման:

Տեսչական մարմնի ծառայող՝ _____
(ստորագրություն)

Տնտեսավարող՝ _____»:
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ